ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ մեղրեցիներ,

Անսահման հպարտությամբ ու ջերմությամբ շնորհավորում եմ բոլորիս սիրելի քաղաքի՝ Մեղրու օրվա առթիվ:

Այսօր ոչ միայն տոն է, այլև հարգանքի ու երախտագիտության օր՝ նվիրված դարավոր պատմություն ունեցող մեր քաղաքի փառավոր անցյալին, նրա հերոսական ժողովրդին ու արարող ներկային:

Մեղրին բնակավայր է, որի անունը գալիս է դարերի խորքից՝ այն եղել է պատմական Արևիք գավառի կենտրոնը:

Մեր պապերն ու նախապապերը, լինելով ազատատենչ ու ամուր կամքի տեր մարդիկ, ակտիվ մասնակցություն են ունեցել 18-րդ դարի սկզբին Դավիթ Բեկի և Մխիթար Սպարապետի առաջնորդած ազգային-ազատագրական շարժումներին՝ ի նպաստ հայրենիքի անկախության և արժանապատվության: Այդ ոգին շարունակվում է մեզանում ապրել մինչև օրս:

Մեղրին քաղաքի կարգավիճակ է ստացել 1984 թվականի մայիսի 31-ին՝ իրավամբ արժանի լինելով այդ կոչմանը, իր հոգեկերտվածքով, աշխատասեր ժողովրդով, մշակույթով և պատմությամբ:

Այսօր, շարունակելով մեր պապերի գործը, մենք պարտավոր ենք նոր շունչ տալ Մեղրիին՝ որպես մշակույթի, գիտելիքի, աշխատանքի, արժանապատվության ու հայրենասիրության իրական խորհրդանիշ և պայքարել ու արարել՝ հանուն մեր քաղաքի պայծառ ապագայի:

Թո՛ղ խաղաղությունն ու բարօրությունը մշտապես ուղեկցեն մեր քաղաքին, թող Մեղրին շարունակի լինել հպարտության, սիրո ու միասնականության խորհրդանիշ:

Շնորհավոր տոնդ մեր հինավուրց Մեղրի: